




# Հ.Մ.Մ.ի ԱՐԻՆԵՐ

Թիվ 3, Յունուար 2008

ملحق جريدة آارات



Արիներ ենք Հ.Մ.Մ.ի  
Անվեհեր ու առաքիկի  
Մեր սրտին մէջ անշէջ կ'ապրի,  
Հայրենիքի բոցն ամենի:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

 Մեր Խօսքը.....	1
 Հ.Մ.Մ.եան Յուշեր Հ.Մ.Մ.ի Պատմականը .....	2
 Յիշենք Մեր Արիւները Ո՛վ Է Գեորգ Նաճարեան .....	3
 Ձեյթուն.....	4
 Ամանօրեայ Հաւաքոյթ Հ.Մ.Մ.ի Շնորհակալական ճաշկերոյթ.....	5
 Գայլիկներ Եւ Արծուիկներ Գայլիկներու Առօրեայէն.....	13
 Արենուշներ Արենուշներու Առօրեայէն.....	14
 Սկաուտներ Սկաուտական Կեանք.....	15
 Երեցներ Երեցական Կեանք.....	16
 Հ.Մ.Մ.ի Փողերախումբ Նոր Տարուայ Տողանցք .....	17
 النمر السومطري .....	18
 Global Warming.....	19
 The World Game.....	20

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Խմբապետ Փօլ Մուղալեան  
 Նազելի Նալպանտեան  
 Միրէյ Տէմիրճեան  
 Մարի Էլիզապէթ Մինասեան  
 Յովիկ Զօպեան  
 Մարիա Ազնիկեան  
 ճորճիկ Ահարոնեան  
 Յովիկ Երեմեան  
 Մարի Փաթափութեան  
 Ժագ Եագուպեան  
 Լուսինիկ Կոտալազեան  
 Սուրեն Եագուպեան  
 Պարզեւ Վարդանեան

Կապ Հասարակելու համար դիմել՝  
 Mobile: 03/840907  
 E-mail: [homenmenariner@hotmail.com](mailto:homenmenariner@hotmail.com)



## ՄԵՐ ԽՕՄՔԸ

**Ա**հաւասիկ տարի մը եւս անցաւ մեր կեանքէն եւ մեր ետին ձգեցինք 2007-ն, նոր սպասումներով եւ ակնկալիքներով դիմաւորելով 2008-ն, յուսալով որ գէթ այս տարին կ'ըլլայ յաջողութեան եւ խաղաղութեան տարի մը, որուն ընթացքին կը կարողանանք իրականացնել մեր երազներն ու նպատակները:

Նոր թափ եւ նոր աւիւն ստացած, եւ ծանր աշխատանքի նախապատրաստուած ոգեւորութեամբ, կը յառաջանանք 2008ի շեմէն ներս, մաղթելով որ այս տարի կարենանք յաջողութեամբ եւ ամբողջականօրէն իրագործել մեր ծրագիրները, յաղթահարելով մեր դեմ ցցուած բոլոր խոչընդոտներն ու հարցերը, ի խնդիր մեր սիրելի միութեան՝ Զ.Մ.Մ.ի վերելքին եւ յառաջիադացքին, ինչպէս նաեւ սերմանել մեր մատղաշ նոր սերունդին հոգիներուն մէջ հայրենասիրութեան եւ հայասիրութեան առաքելութիւնները:

Բացի մեր աւանդական դարձած ձեռնարկներէն եւ բանակումներէն, մեր պարբերաթերթի այս էջերէն ձեզի կը խոստանանք այս տարի հանդէս գալ նորանոր ձեռնարկներով եւ նորատիպ մտայղացումներով, միշտ հետեւելով Զ.Մ.Մ.ի «Առողջ Միտք Առողջ Մարմնի Մէջ» նշանաբանին, «Միշտ Պատրաստ» ըլլալով ծառայելու եւ մեր նպաստը բերելու հայութեան, հայրենիքին եւ յանուն հայ ազգի գոյատեւման:

**Զ.Մ.Մ. ՊԵՅՐՈՒԹԻ  
ՍԿԱՌՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**



# Հ.Մ.Մ.Ի ՊԱՏՄԱԿԱՆԸ

Ձ Զ.Մ.Մ.ի ճիւղերու մէջ կ'ընդգրկուի ոչ միայն ֆուլթայուլն ու այլազան մարզական խաղերը, այլ ըստ իր «Առողջ Միտք Առողջ Մարմնի Մէջ» սկզբունքին, կը մարզէ նաեւ հայ սոր սերունդի սիրտն ու հոգին, ինչպէս նաեւ յուսահատ հայրենակիցներուն հոգիներուն կը ներմուծէ հայրենասիրական ազնիւ ոգին:



Ձ Անսահման ազգասիրութիւն, անվհատ կամք, դիմադրողական ուժ ու պայքար կը ցոլար եղեռնէն վերապրող հայերուն առաջին սերունդի սրտերէն ու հոգիներէն: Այս սերունդին է որ կը պարտինք Զ.Մ.Մ.ի հիմնադրու-

թիւնը եւ բարոյական արժեքներու տեր ներկայ երիտասարդութիւնը: Այս սերունդն է որ Ո՛Չ ըսաւ թշուառութեան ու յուսահատութեան, ու ապա, ամբողջութեամբ նուիրուեցաւ ազգին ու հայրենիքի կերտումին, որպէսզի հայութիւնը անգամ մը եւս վերականգնի ու հետագայ սերունդները կարենան ապրիլ եւ գոյատեւել նպաստաւոր պայմաններու մէջ:

Ձ Լիբանանի մէջ Զ.Մ.Մ.ական երիտասարդներ թաղային ու հայրենակցական միութիւններու կողքին կը կազմեն նաեւ մարզական եւ յատկապէս ֆուլթայուլային խումբեր, զանոնք կոչելով զանազան անուններով.- «Պայքար», «Փոքր Զայք», «Կիլիկիա» եւ այլ:

Ձ 1922էն ետք Լիբանանի հայութեան թիւը աւելի եւս կը բարձրանայ երբ բազմաթիւ հայեր Դամասկոսէն կը գաղթեն Լիբանան: Ասիկա առիթ է սոր թափ կու տայ սոր աւիւն զգեցած լիբանանահայ գաղութին, ուր կը հաստատուին սոր ակումբներ, մարզական սոր խումբեր եւ զանազան ընկերային, մշակութային եւ բարեսիրական միութիւններ: Զ.Մ.Մ.ական նուիրեալ երիտասարդներէն երախտագետօրէն կը յիշենք Լուսֆիք Պուլտուգեան, Միսաս Խաչիկեան, Արամ Օգնայեան եւ Վահրիճ Ճերճեան: Պետութեան մօտ Զ.Մ.Մ.ի առաջին արտօնատերը կ'ըլլայ Բիւզանդ Բեհեան եւ ապա Միսաք Վեհունի, որուն կը յաջորդէ իր որդին՝ Արշամ Վեհունի:

Ձ Անապատներու դժոխքէն վերապրած հայ սերունդը պայքարեցաւ օտարութեան եւ դժբախտութեան դէմ, փորձեց միախմբել հայ պատանիներն ու երիտասարդները, անոնց ներարկեց յոյս, հայրենասիրական ոգի ու անբեկանելի հաւատք: Անոնք հիմնեցին սոր միութիւններ, որպէսզի չվհատի ու չճուլուի հայ երիտասարդութիւնը, այլ միանան, բազմանան եւ զօրանան եւ բարձր պահեն հայութեան անունն ու ոյժը:



## Յիշենք Մեր Արիները

# Ո՞Վ Է ԳԵՌՐԳ ՆԱՃԱՐԵԱՆ

Գեորգ Նաճարեան ծնած է 1929ին: Իր ուսումը ստացած է Մետրոպեան վարժարանէն: 1936-37 տարիներուն, 8 տարեկան հասակին անդամակցած է Զ.Ս.Ս.ի սկաուտական շարժումին: Իր խմբապետներէն մին եղած է Պօղոս Փափազեանը, իսկ փոխ-խմբապետ՝ Յարութիւն Սէմերճեան: Անոր պաշտօնը Զ.Ս.Ս.ի սկաուտութենէն ներս աստիճանաբար բարձրացած է, արժանակալով առաջնորդի եւ վարիչ առաջնորդի պաշտօններուն: Ան ծառայած է ակումբին իր բոլոր սրտով եւ նուիրուածութեամբ,



հանդիսանալով տիպար եւ օրինակելի սկաուտ մը: 1947ին, երբ առաջին անգամ ըլլալով հիմնուած է Զ.Ս.Ս.ի փողերախումբը, ան առանց երկմտանքի մաս կազմած է անոր, նախ փող նուագելով, ապա՝ թմբուկ: Ընկեր Գեորգի կարծիքով փողերախումբի հիմնադրութեամբ շատ անելի զօրացած է նոր թափ ստացած է սկաուտական շարժումը:

Անոր սկաուտական կեանքի ամենահաճելի օրերը եղած են երբ ինք կը մասնակցեր սկաուտական մասնաճիւղային տարեկան տողանցքներուն, որոնք տեղի կ'ունենային տարի մը Լիբանանի մէջ, իսկ յաջորդ տարին՝ Յալէպի մէջ: Անոր խոր ուրախութիւն եւ հրճուանք կը պատճառէին Չատկուան տոնակատարութիւնները, մինչ մարզական եւ զարգացման խաղերը իր մէջ արթնցուցած են մրցակցութեան ոգին, մրցումներ, որոնք խանդավառութեամբ կը խաղար սկաուտական իր ընկերներուն հետ, որոնցմէ եղած են Գրիգոր Տերատուրեան, Ժիրայր Տերատուրեան, Յովհաննես Նաճարեան, Կարպիս Պերպերեան, Գրիգոր Գասապեան եւ Կարապետ Սուղալեան:



Գեորգ Նաճարեանի պատգամն է, Զ.Ս.Ս.ի երիտասարդները երբեք չձուլուին, չհեռանան իրենց ակումբէն եւ արմատներէն, միշտ բարձր պահեն իրենց Զ.Ս.Ս.ի անունը, մաղթելով անոնց երկար եւ բարեբեր աշխատանք:



## ՁԷՅԹՈՒՆ

Ձեյթուն երկու կողմեն շրջապատուած է Պերզնկայի եւ Սովուգտերէի բարձր լեռներով, իսկ կռնակը՝ Չրոկ, դիմացը՝ հարաւակողմը կը տարածուէր Շէպէք եւ Գոչակ լեռները: Արեւելքէն եւ Արեւմուտքէն կը հոսէին երկու գետակներ, որոնք քաղաքին հարաւը իրարու միանալով եռանկիւս մը կը կազմէին: Ձեյթուն ուներ չորս եկեղեցի՝ իւրաքանչիւր թաղի համար մէկ եկեղեցի.- Ս. Աստուածածին, Ս. Սարգիս, Ս. Յովհաննէս եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Արեւելեան կողմը կը գտնուէր մօտ մէկուկէս ժամ հեռաւորութեան վրայ Ս. Աստուածածնի վանքը որ ըստ ավանդութեան շինուած էր Բարդղղոմէս Առաքեալին ձեռամբ: Հոն կը գտնուէր Նաեւ բարձրագոյն (եօթը դասարան) Նախակրթարանը: Ձեյթունի մէջ կային, բայց քիչ թիւով Բողոքական եւ Կաթողիկէ համայնքի պատկանող հայեր: Կառավարական պալատը կը գտնուէր քաղաքին ճիշդ կեդրոնը: Նաեւ Ազգային առաջնորդարանը կը գտնուէր ազգային կեդրոնական դպրոցի Արեւելեան ճակատը:



Ձեյթունցին ըլլալով չարքաշ ու կռուազան, ուներ հետեւեալ գլխաւոր արհեստները, այգեմշակութիւն, տախտակի պատրաստութիւն, ջորեպանութիւն, երկաթի հանք ունենալով, կը պատրաստէին պայտ ու տեղական գամեր եւ մասամբ զինագործութիւն:

Արտածումի գլխաւոր Նիւթը կը կազմէր չամիչը եւ բուպը, շուկայ ունենալով Ալպուստան, Անտեռուն, Սիս ու Ատանա: Չորեպանութիւնը իրենց համար արհեստ մըն էր. գրեթէ ամէն տուն ուներ գէթ ջորի մը, որուն միջոցաւ ընտանիքը կ'ապրէր մասամբ հանգստաւետ կեանք մը:

Թուրք կառավարութիւնը 1915ին, տեղահանումէն վերջ, Օգոստոս 14ին, Ս. Աստուածածնի տօնին օրը, կրակ տուաւ ու փճացուց քաղաքը:



Ամանօրեայ Հաւարոյթ

# Հ.Մ.Մ.Ի ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Կիրակի, 30 Դեկտեմբեր 2007ին, նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Մ.ի սկաուտական Խորհուրդին, տեղի ունեցաւ Հ.Մ.Մ.ի սկաուտութեան շնորհակալական ճաշկերոյթը, Տպայայի «Քասր Էլ-Սուֆարա» ճաշարանին մէջ, ուր միատեղուեցան բոլոր նախկին ու այժմու սկաուտները, իրենց ծնողներուն եւ ընտանիքներուն հետ:



Հ.Մ.Մ. սկուումբէն յատուկ հանրակառքերով փոխադրամիջոցներ չունեցող հրաւիրեալներ ուղղուեցան ճաշարան, ուր անոնք դիմաւորուեցան սկաուտականի ամբողջ կազմին կողմէ: Մինչ

ներսը սահիկներու ցուցադրութիւն կը կատարուէր յատուկ մեծ պաստառի վրայ:

Երբ բոլոր հրաւիրեալները գրաւեցին իրենց տրամադրուած սեղանները, յայտագրի բացման խօսքով հանդէս եկաւ ընդհանուր խմբապետ Ընկ.Փօլ Մուղալեան (*խօսքը կու տանք առանձին*):



Ընկեր Մուղալեանի շնորհակալական խօսքէն ետք, արեւուշներու փոխ-խմբապետուհի Վիգի Սալպաշեան արաբերէնով ներկայացուց սկաուտական խումբի սրտի խօսքը, որմէ ետք ընկերուհի Մարիա Ազնիկեան՝



հակիրճ նկարագրականը եւ ծանօթացումը կատարեց Հ.Մ.Մ.ի սկաուտութեան նոր ամսաթերթ՝ «Հ.Մ.Մ.ի Արիւնք»-ու (*խօսքը կու տանք առանձին*):

Բացման եւ սրտի խօսքերու շարքին եկան մաս կազմելու նաեւ Ընկեր Ղազարոս Ալթունեանի եւ Ընկ. Միսաք Նաճարեանի սրտաբուխ եւ ինքնաբուխ սրտի խօսքերը:

Ապա, յայտագիրը ճոխացաւ հայկա-



**Ամանորեայ Հաւարոյթ**

կան պարային երգերու ունկնդրութեամբ եւ պարերով: Պարահարթակէն վար չէին իջներ սկաուտներն ու արեւուշները: Որոնցմէ ետ չէին մնար նա- եւ գայլիկներն ու արծուիկները:



Յայտագրի ընթացքին յատուկ վիճակաձգու- թեամբ տեղի ունեցաւ «Հ.Մ.Մ.Ի Արիներ» ամսա- թերթի մէջ տեղ գտած մրցում-հարցարանի եր- կու մրցանակակիրներու անուններու յայտարա- րութիւնը, որոնց իւրաքանչիւրին յանձնուեցաւ 50 Ամ. Տոլար:

Այս մրցումի մրցանակակիրներն էին Լոռի Մետրոպէան եւ Սարգիս Սերոբեան:



Աւանդական դարձած վիճակաձգութենէ եւ արժէքաւոր նուէրներու բաշխումէն ետք, տեղի ունեցաւ Հ.Մ.Մ.Ի դրօշակի պատկերով կարկան- դակի հատումը, սկաուտական խորհուրդի ամ- բողջ կազմի եւ Հ.Մ.Մ.Ի վարչութեան ներկայա- ցուցիչներու մասնակցութեամբ:

Կաղանդ Պապայի գալուստը առաւել եւս խանդավառեց մթնոլորտը, յատկապէս փոքրիկ- ներուն, որոնք անդադար կը ցատկոռտին եւ կը պարէին անոր շուրջը:

Յայտագրի ավարտին տեղի ունեցաւ Կաղան- դի ծաղիկներու (christmas flower) բաշխում, որոնց իւրաքանչիւրին կցուած էր Հ.Մ.Մ.Ի դրօշակ մը: Երբ յայտագիրը ավարտեցաւ, այս դրօշակները վեր բարձրացան ու ծածանեցան հայրենասիրական եւ Հ.Մ.Մ.եան երգերու շարանով, խանդավառութիւնը հասցնելով գագատնակէտին:

**ԸՆԿ. ՓՕԼ ՄՈՒՂԱԼԵԱՆԻ ՍՐՏԻ ԽՕՍՔԸ**

Սիրելի ներկաներ,  
Բարի եկած էք մեր շնորհակալական ճաշկերոյթին:

Այս ճաշկերոյթին նպատակն է ձեզմէ իւրաքանչիւրին մեր շնորհակա- լութեան եւ երախտագիտութեան խօսքը յայտնելու, թէ՛ որպէս մասնա- կիցներ եւ օժանդակողներ Հ.Մ.Մ.Ի սկաուտական խումբի գոյատեւման գծով եւ թէ՛ որպէս ծնողներ, որ ձեր ամենաթանկագինը՝ ձեր զաւակները մեզի վստահած էք, որպէսզի անոնք թրծուին եւ կոփուին որպէս հայկա- գուններ եւ որպէս Հ.Մ.Մ.ականներ:

Սիրելի ծնողներ,

Մեր խորագոյն շնորհակալութիւնը ձեզի, որ ձեր զաւակները ուղարկե- լով Հ.Մ.Մ.Ի սկաուտութեան, ուղղակի օժանդակած կ'ըլլաք սկաուտական



### Ամանօրեայ Հաւարոյք

խումբի գոյատեւման եւ յաջորդ սերունդի պատրաստութեան, որովհետեւ ձեր գաւակներն եւ, որոնք վաղը պիտի ստանձնեն սկաուտական բուրգի բարձրագոյն պաշտօնները, հետեւաբար՝ առաջնորդեն 70ամեայ այս խումբը դէպի ապագայ եւ յետագայ ժամանակաշրջան: Կը մաղթեմ որ իրենք ալ իրենց կարգին ձեզ նման կը կարողանան շարունակել ազգակերտումի եւ յատկապէս լիբանանահայ գաղութի գոյատեւման այս սրբազան գործը:



Սիրելի Հ.Մ.Մ. ականներ եւ սկաուտական մեր խումբի անդամակցողներ եւ անդամակիցներ:

Առանց այլեւայլի, մեծագոյն յարգանքի տուրքս կու տամ ձեզի եւ կը խոնարհիմ ձեր ազնիւ եւ անմնացորդ աշխատանքին եւ բերած անփոխարինելի օժանդակութեան առջեւ:

Առանց ձեզ նման աշխատակիցներու եւ ազատ ժամերը առանց երկմտանքի ակումբին զոհող նուիրեալներու, անկասկած, որ սկաուտական մեր խումբը պիտի չհասներ իր 70 ամեակին:

Վստահաբար, մեր ակումբային կեանքին մէջ կը հանդիպինք դժուարութիւններու, արգելքներու, անհասկացողութեանց եւ բազմաթիւ սրտնեղիչ երեւոյթներու, սակայն անոնք կրնանք յաղթահարել երբ դուրս գանք մեր անձնական նեղ շահերէն եւ մտածենք միայն մեր շրջանակի եւ մեր ակումբի գերագոյն շահերու մասին:

Վստահ եղէք, սիրելի ներկաներ, որ ապագային եթէ ակնարկ մը նետենք մեր կեանքին վրայ, շատ ճղճիմ եւ աննշան պիտի թուին բոլոր վերոյիշեալ բացասական կետերը, եւ անոր դիմաց հոգեկան մեծ գոհունակութեամբ եւ հպարտութեամբ պիտի յիշենք ակումբային եւ սկաուտական կեանքի մեր նուաճումներն ու իրագործումները, որոնք անշուշտ իրագործուած պիտի ըլլան մեր հաւաքական եւ համերաշխ աշխատանքի շնորհիւ:

Արդարեւ՝ մեր հետագայ հաւաքական եւ համերաշխութեամբ իրագործուելիք աշխատանքները նպատակաուղղենք մեր սիրելի 85 ամեայ Հ.Մ.Մ.ի բարօրութեան ի խնդիր, միութիւն մը, որուն գոյատեւման պատասխանատուութեան ջահը, որ մեզի յանձնուած էր մեր նախկին երախտաւորներու կողմէ, այժմ մենք ալ մեր կարգին, պիտի փոխանցենք մեր նոր սերունդին, հաստատ ըլլալով որ անոնք ալ իրենց կարգին, պիտի կարենան արդարացնել իրենց ուսերուն վրայ դրուած ծանր պատասխանատուութիւնները:

Անգամ մը եւս շնորհակալութիւն ձեր բոլորին եւ բարի վայելում:



**Ամանորեայ Հաւարոյթ**

**ՄԱՐԻԱ ԱԶՆԻԿԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՍԲԸ**

Խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներ, գաղափարներու զուգորդութեամբ միատեղուելով կրցան կեանքի կոչել «Հ.Մ.Մ.ի Արհներ» ամսաթերթը, որ փորձառական կարճ շրջանէ մը ետք, վերանորոգուած եւ աւելի բազմանդամ անձնակազմով կանոնաւոր կերպով սկսաւ լոյս տեսնել ամսական դրութեամբ, որպէս «Արարատ» թերթի յաւելուածական:



«Հ.Մ.Մ.ի Արհներ» ամսաթերթը հարուստ է իր յօդուածներու այլազանութեամբ, գոհացնելով ամէն տարիքի եւ սեռի պատկանող իր ընթերցողները: Հոն ընդգրկուած են հարցազրոյցներ, մրցում-հարցարաններ, բնագիտական գիտելիքներ, ընկերային սիրեր եւ սկաուտական մեր կեանքին առնչուող նորութիւններ եւ տեղեկագրական յօդուածներ:

Իւրաքանչիւր լաւ ներկայացում կը պահանջէ լաւ պատրաստութիւն, այդ պատճառով խմբագրութեան անձնակազմի անդամները անշահախընդիր կերպով իրենց ազատ ժամերն ու արձակուրդային օրերը կը տրամադրեն այս ամսաթերթին, զայն հետաքրքրական եւ այլազան սիրերով ապահովելու նպատակով, արդարացնելու համար իրենց վստահուած պատասխանատուութիւնը:



Առանց վերապահութեամբ կրնանք ըսել, թէ այս երիտասարդները, չարքաշ, աշխատասեր եւ ամենէն կարեւորը՝

հետեւողական կերպով կը հետապնդեն այս բժախնդիր աշխատանք պահանջող նախաձեռնութիւնը, որ վստահաբար, պարծանք կը պատճառէ մեր ամբողջ սկաուտական խումբին:

Ամսաթերթը, ինչպէս բոլորս գիտենք, իր գոյատեւման համար կը վստահի հովանաւորներու եւ երիտասարդներու, աշխատանքը գնահատող երախտաւորներու: Այս ուղղութեամբ, մեր խորագոյն շնորհակալութիւնները կ'ուզենք յայտնել TeleTrade Communications հաստատութեան եւ BankMedին, իրենց տրամադրած սիրալիր աջակցութեան եւ քաջալերանքին համար:



## Ամանորեայ Համարոյթ





Ամանորեայ  
Համարոյթ





Ամանորեայ  
Հավարոյթ





Ամսնորեայ  
Հասարկը





Գայլիկներ և Արծուիկներ

# ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԱՌՕՐԵԱՅԷՆ



Դեկտեմբերի 1ին, որոշուած ժամուն Գայլիկներն ու արծուիկները արդէն ներկայ էին ակումբ, սակայն ի զարմանս բոլորին, իրենց ժողովասարահին դուռը փակ էր: Փոքրիկները շատ շուտ ենթադրեցին որ անակնկալ մը զիրենք կը սպասէ այդ պահուն:

Երբ սրահին դռները բացուեցան, փոքրիկները ապշած դիտեցին ներսը, եւ վայրկեանական անդրադարձան թէ Սրբուհի Վարվառայի տօնին առթիւ նախապատրաստուած ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ իրենց համար:

Յայտագիրը սկսաւ face painting-ով: Մինչ պատասխանատուներ սկսան մէկ մասին դեմքերը ներկել: Իսկ մինչեւ իրենց կարգը հասներ, միւս փոքրիկները կը պարէին խումբերով: Բաւական զուարճանալի էտք, երկու Գայլիկներ կարկանդակով մտան սրահ, տօնախմբելու համար Նայիրիի եւ Նարեկի տարեդարձը: Յայտագրի աւարտին, իւրաքանչիւր Գայլիկ եւ արծուիկ ստացաւ ձեռնային աշխատանք մը:



Դեկտեմբերի 8, Շաբաթ օրը տրամադրուած էր մտերմիկ գրոյցի մը, որուն ընթացքին պատասխանատուներ Գայլիկներուն հետ գրուցեցին սկաուտական նոր ամսաթերթի եւ անոր կարելուութեան մասին: Ապա, էջ առ էջ ընթերցելով Գայլիկներուն եւ արծուիկներուն, բացատրեցին գրքոյկի մէջ ընդգրկուած նիւթերը: Փոքրիկները յատկապէս ուրախացան իրենց էջին համար, վերոյիշելով իրենց յայտագիրները եւ անցուցած հաճելի ժամանցները: Այս հաւաքէն ետք եւս իւրաքանչիւր փոքրիկ տուն վերադարձաւ փոքրիկ նուէրներով:

Յայտագիրը սկսաւ face painting-ով: Մինչ պատասխանատուներ սկսան մէկ մասին դեմքերը ներկել: Իսկ մինչեւ իրենց կարգը հասներ, միւս փոքրիկները կը պարէին խումբերով: Բաւական զուարճանալի էտք, երկու Գայլիկներ կարկանդակով մտան սրահ, տօնախմբելու համար Նայիրիի եւ Նարեկի տարեդարձը: Յայտագրի աւարտին, իւրաքանչիւր Գայլիկ եւ արծուիկ ստացաւ ձեռնային աշխատանք մը:



ճելի ժամանցները: Այս հաւաքէն ետք եւս իւրաքանչիւր փոքրիկ տուն վերադարձաւ փոքրիկ նուէրներով:



# ԱՐԵՆՈՒՇՆԵՐՈՒ ԱՌՕՐԵԱՅԷՆ

Դեկտեմբեր ամսուան առաջին երկու շաբաթները արեւուշներ, ձեռք-ձեռքի տուած, մէկ անձի նման սկսան Կաղանդի յայտագրի պատրաստութեան, որպէսզի կարենան յաջողութեամբ պսակել այս առթիւ տեղի ունենալիք տօնակատարութիւնները: Որպէս նախապատրաստութիւն,



արեւուշները սկսան սրահի մաքրութեամբ, ապա զարդարեցին շքեղ տօնածառ մը եւ Սուրբ Ծնունդի մսուրը: Տօնածառի զարդարանքը աւարտելէ ետք, արեւուշներ սկսան զարդարել առաստաղը գոյնզգոյն փուջիկներով: Իրենց գեղարուեստական տաղանդները գործի լծելով, սրահի հայելիին վրայ գծեցին Կաղանդ Պապուկը, իր սահակով եւ եղիկներով:

Շաբաթ, 22 Դեկտեմբեր 2007ին, ժամանակը արդէն իսկ հասած էր տօնախմբելու համար Կաղանդ Պապուկի գալուստը, որ անխտիր բոլոր փոքրիկներուն ուրախութիւն եւ հրճուանք կը պատճառէ: Մինչեւ Կաղանդ Պապուկի գալուստը, անհամբեր եւ խանդավառ, փոքրիկները շատ հաճելի ժամանակ անցուցին արեւուշներու պատրաստած խաղերով, որոնց աւարտին անոնք ստացան նուէրներ, ինչպէս նաեւ հաճելի անակնկալ մը եղաւ երկու խամաճիկներու մասնակցութիւնը տոյն խաղերուն:



Խաղերու աւարտին, փոքրիկներ երբ իրենց մանկական ձայնի ամբողջ ուժգնութեամբ կ'երգէին Ամանորեան եւ Կաղանդ Պապայի յատուկ երգեր, յանկարծ լսեցին զանգակին ձայնը, որ կ'աւետեր Կաղանդ Պապուկի գալուստը: Աննկարագրելի ուրախութեամբ եւ խայտանքով անոնք դիմաւորեցին երկարօրէն սպասուած Կաղանդ Պապուկը, ոգելորութեամբ անսահման ուրախութեամբ անոնք երգեցին, արտասանեցին եւ ցուցադրեցին իրենց բոլոր տաղանդները եւ ձիրքերը: Յայտագրի աւարտին, Կաղանդ Պապուկը բոլորին բաժնեց գեղեցիկ կաղանդէքներ եւ նուէրներ, անոնց մաղթելով որ 2008 տարին ըլլայ յաջողութեան եւ ուրախութեան տարի մը:



Սկաուտներ

# ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Շաբաթ, 8 Դեկտեմբերին, դրօշակի արարողութենէն ետք, սկաուտներու պատասխանատու աստիճանաւորներ պատրաստած էին «նշանա-  
 ռութեան խաղ» մը: Այս խաղին համար, սկաուտներ բաժնուեցան չորս  
 խումբերու եւ սկսաւ իւրաքանչիւրը իր կարգին յատուկ զենքով նշան առ-  
 նել եւ հարուածել բաւական հեռաւորութեան վրայ շարուած շիշերը, որ-  
 պէսզի կէտ շահեցնէ իր խումբին համար: Խաղի ամբողջ ընթացքին բոլոր  
 խանդավառութեամբ կը մասնակցէին այս մրցումին, որպէսզի հաւա-  
 քէին առաւելագոյն կետերը: Հակառակ խիստ խանդավառ մթնոլորտին,  
 լռութիւն կը տիրէր երբ մասնակիցներ կը պատրաստուէին նշանառու-  
 թեան, որպէսզի անոնք չկորսնցնեն իրենց կեդրոնացումը եւ շահին այն



արժէքաւոր կետերը, որ իրենց խում-  
 բին կու տայ առաւելութիւն: Բոլորը  
 ուշադրութեամբ կեդրոնացած էին  
 զենքի իւրաքանչիւր արձակման  
 վրայ, որ տեսնէն, թէ կապարը արդ-  
 եօք պիտի դպչի՞ շիշին: Ի վերջոյ,  
 չորս խմբակներէն մնացին երկու  
 խմբակներ, որոնք համահաւասար  
 կետերով հասած էին խաղի աւար-  
 տին: Սկաուտներ սկսան աւելի կայ-  
 տառ եւ աղմկալի դարձնել խաղը: Աւարտին, այս խաղէն յաղթական  
 դուրս եկաւ «Վագր» խմբակը:

Դեկտեմբեր ամսուան 12րդ օրը արտասովոր օր մըն էր: Այդ օրը,  
 դպրոցներ փակ էին: Սկաուտներ կէսօրուան ժամը 12:00ին հաւաքուեցան  
 ակումբ, որպէսզի մասնակցին Հ.Ս.Ս.ի 2008 թուականի օրացոյցի  
 վաճառման: Սկաուտներ, բաժնուելով քանի մը խմբակներու, տարածուե-  
 ցան Հաճըն, Խալիլ Պատաուի, Մար Միսայել, Պուրճ Համուտ եւ Ամանոս  
 շրջաններու մէջ, եւ կարգապահութեամբ եւ սկաուտի վայել վարուելակեր-  
 պով, շնորհաւորեցին բոլորին Նոր Տարին եւ Սուրբ  
 Ծնունդը եւ ծախեցին իրենց բաժին ինկած բոլոր  
 օրացոյցները: Յաջորդ օրը, պատասխանատու աս-  
 տիճանաւոր սկաուտներ իրենց կարգին, բաժնուե-  
 լով սկսան օրացոյց բաժնել աւելի հեռաւոր շրջան-  
 ներ, ինչպէս Չալքա, Անթիլիաս, Հըրշ Թէպըթ: Այս  
 խմբային աշխատանք պահանջող ձեռնարկէն ոգե-  
 տրուած, Վագր խմբակի անդամները իրենք եւս իրենց անհատական ջան-  
 քերով հրատարակեցին իրենց խմբակի յատուկ պատի օրացոյցը, արժա-  
 նանալով գնահատանքի եւ բարի նախանձի:





Երեցներ

# ԵՐԷՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Շաբաթ, 29 Դեկտեմբեր 2007ին, դրօշակի արարողութենէն անմիջապէս ետք, ամենամեայ տոնակոթան նման, այս տարի եւս Կաղանդի եւ Սուրբ Ճուռնի խորհուրդին առթիւ, երեցական ամբողջ խումբը, սկաուտներուն ընկերակցութեամբ ուղղուեցան «Չուարթնոց» կեդրոն, այս գեղեցիկ տօնը տօնելու թերաճ մանուկներուն հետ:



Այս առթիւ, տղաքը խաղերու ճոխ յայտագիր մը պատրաստած էին,

որպէսզի հաճելի մթնոլորտի մը մէջ անցնէին այս այցելութիւնը: Յայտագրի ընթացքին սկաուտներն ու երեցները թերաճ մանուկներու հետ միասին երգեցին, պարեցին եւ խաղցան այլազան խաղեր, :



Մթնոլորտը աւելի եւս ճոխացաւ թերաճ մանուկներու արտասանութիւններով եւ աղօթքներով, որոնց աւարտին, յանկարծ լսեցինք Կաղանդ Պապուկի զանգակի ձայնը, որուն անհամբեր կը սպասէին բոլոր մանուկները:

Անկարելի էր նկարագրել անոնց ուրախութիւնը Կաղանդ Պապուկի զալուստը տեսնելով, որուն դիմաւորեցին ուրախութեան ճիչերով եւ հրճուանքի արտայայտութիւններով: Նուէրներու բաշխումը տեղի ունեցաւ աղմկալի մթնոլորտի մը մէջ: Բոլոր մանուկները անխտիր ստացան գեղեցիկ նուէրներ: Ապա խմբային նկարահանումներով, աւարտեցաւ տօնախմբութիւնը:





Հ.Մ.Մ.ի Փողերախումբ

# ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՏՈՂԱՆՑՔ



Շաբաթ, 29ի Դեկտեմբերին, Ամասոտեան օրերուն, Հ.Մ.Մ.ի փողերախումբի անակնկալը հանդիսացաւ սկաուտական տողանցք մը, որուն ընթացքին փողերախումբի ամբողջ կազմը վերածուած էր կարմիր-ճերմակ տարազներ հագած Կաղանդ Պապուկներու հսկայ խումբի մը, որ իր տեսքով նոյնիսկ հրճուանք պատճառեց շրջանի բնակիչներուն եւ անցորդներուն:

Սպասուած տողանցքը մեկնարկ ստանալով Խալիլ Պատաուլիի Հ.Մ.Մ. ակումբէն հասաւ մինչեւ Ժըմմէյզի եւ Սայֆի, մինչ ճամբուն ամբողջ երկայնքին կարմիր գոյնի Buggy ինքնաշարժով տղաք խորհրդանշական նուէրներ կը բաժնէին անցորդներուն եւ իրենց հետեւող ժողովուրդին: Նուէրներու բաշխումին հետ մեկտեղ տօնական եղանակներ հնչեցնելով Հ.Մ.Մ.ի փողերախումբը վերադարձաւ Հաճըն եւ Կաղանդ Պապաներու իր արշաւը աւարտեց դէպի Հ.Մ.Մ. տուն դարձով: Այս տողանցքը, որ տեւեց խիստ հաճելի 3 ժամեր, շատ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց սկաուտական խումբին հանդէպ, որուն հետեւողները հետզհետէ շատնալով բնակի տեսք առին, ճամբու ամբողջ տեւողութեամբ հետեւելով խումբին եւ միասնաբար վերադառնալով ակումբ, տօնական հաւաքոյթ մըն ալ ստեղծելով տեղուոյն վրայ:



## النمر السومطري



أول مجلة شهرية صدرت عن طريق بادن باول في سنة ١٩٠٨، وها نحن اليوم نكرر هذه الظاهرة الثقافية ضمن حركتنا الكشفية، لتعزيز قدرات الفرد وتنمية ثقافته. الحيوان هو كائن حي، يمتاز بالحياة والحس والحركة. النمر حيوان لاحم ضخم من فصيلة السنوريات وهو أكبر أعضاء الفصيلة. تعتبر شبه القارة الهندية موطن أكثر من ٨٠٪ من النمور البرية في العالم، وتقتطن النمور


الغابات أو الأراضي العشبية حيث يساعدها فرائها المخطط على التمويه بشكل كبير وبالتالي اصطياد فرائس تكون في العادة أكثر شاقة و سرعة منها. تحب النمور أن تنخل في الماء بشكل مستمر في الأيام الحارة، لكنها على عكس اليغاور (نوع من السنوريات قريب للنمر) لا تعتبر سباحة قوية بل مجرد محبة للاستحمام حيث تشاهد في البرك و الأنهار والمستنقعات. تصطاد النمور بشكل منفرد حيوانات عاشبة متوسطة أو كبيرة الحجم من شاكلة الأيائل، الخنازير البرية، الغور، وجواميس الماء، كما انها قد تصطاد طرائد أصغر حجماً. أحيانا يعتبر الانسان الخطر الأساس من النمور، فغالبا ما تحصل عمليات قنص غير شرعية للنمور من أجل الحصول على فرائها و عظامها و كل عضو من جسمها تقريباً للاستخدام في الطب الصيني التقليدي لانتاج عقاقير يزعم انها مسكنة للألام ومنشطة، لهذه الأسباب وبالإضافة الى تدمير المسكن. فقد تراجعت أعداد النمور بشكل كبير في



البرية. فمنذ قرن مضى كان هناك حوالي ١٠٠٠٠٠ نمر في العالم أما الآن فقد انخفضت الاعداد الى حوالي ٥٠٠٠. وجميع سلالات النمر تم وضعها على لائحة الحيوانات المهددة بالانقراض.



# GLOBAL WARMING



Global warming is the increase in the average temperature of the Earth's near-surface air and oceans in recent decades and its projected continuation.

The global average air temperature near the Earth's rose during the last 100 years. The intergovernmental panel on climate change (IPCC) concludes, "Most of the observed increase in globally averaged temperatures since the mid

20th century is very likely due to the observed increase in anthropogenic greenhouse gas concentrations" via the greenhouse effect. Natural phenomena such as solar variation combined with volcanoes probably had a small warming effect from pre-industrial times to 1950 and a small cooling effect from 1950 onward. These basic conclusions have been endorsed by at least 30 scientific societies and academies of science, including all of the natural academies of science of the major industrialized countries. While individual scientists have voiced disagreement with some of the main conclusions of the IPCC, the overwhelming majority of scientists working on climate change are in agreement with them.



Climate model projections summarized by the IPCC indicate that average global surface temperature will likely rise a further during the 21st century. The range of values results from the use of different scenarios of future: Greenhouse gas emissions as well as models with differing climate sensitivity. Although most studies focus on the period up to 2100, warming and sea level rise are expected to continue for more than a millenium even if greenhouse gas levels are stabilized.





# ՊԱՏԱՍԽԱՆԷ՛ ԵՒ ՇԱՀԻՐ



Հաճեցեք փուփրկել մեջ x նշանը դնել  
շիրակ պատասխանին առջեւ.-

1- Ո՞ր ցամաքամասին վրայ կը գտնուի  
Իտալիա:

- a  Եւրոպա      b  Ասիա

2- Ո՞րն է աշխարհի ամենէն բարձր գագաթը:

- a  Էվերեսթ      b  Սաննին

3- Ո՞րն է ամենէն մեծ ցամաքամասը:

- a  Ասիա      b  Եւրոպա

4- Ո՞վ է ֆրանսահայ հրչակաւոր երգիչը:

- a  Ալ Փաշինո      b  Շարլ Ազնաւուր

5- Որ երկրի հաւաքականը տիրացաւ ֆութ-  
պոլի աշխարհի բաժակին 5 անգամ:

- a  Գերմանիա      b  Պրագիլ

6- Ի՞նչ պատահեցաւ 451 թուականին:

- a  Վարդանանց պատերազմը  
b  Ա. համաշխարհային պատերազմը

7- Ո՞վ է Անգլիոյ Թագուհին:

- a  Էլիզապէթ      b  Տիանա

8- Շումախըրը ո՞ր ինքնաշարժով աշխարհի  
ախոյեան եղաւ վերջին տարիներուն:

- a  Ֆերարի      b  Փորշ

9- Հայաստանի ո՞ր քաղաքին մէջ տեղի  
ունեցաւ 1988ի երկրաշարժը:

- a  Լեւոնական      b  Երեւան

10- Ո՞վ գտաւ Հայոց Այբուբենը:

- a  Ս. Մեսրոպ Մաշտոց  
b  Մեծն Տիգրան

Անուն ..... Մականուն..... Ծննդեան թուական.....

Հասցէ..... Հեռաձայն.....



Մասնակցելու համար, յանձնեցեք ձեր պատաս-  
խաններու ցանկը հետեւեալ ձեւերով.-

1- Հ.Մ.Մ. ակումբ, ամէն օր, ժամը 5-էն 8-ը, ուր  
պիտի տրամադրուի նամակատուփ մը Հ.Մ.Մ.  
Արիներ անունով: Մասնակցելու համար  
հեռաձայնէ՛ք 03-840907 կամ 01-442062

2- E-mail-ով հետեւեալ հասցէին:

[homenmenariner@hotmail.com](mailto:homenmenariner@hotmail.com)



## Մասնակցութեան պայմաններ

- Տարիք 6-էն 25:

- Վերջին պայմանաժամ յանձնելու 29 Փետրուար, 2008:

Պիտի ունենանք 2 բախտաւոր շահողներ, որոնք 10 ճշգրիտ  
պատասխաններ կը փոխանցեն (մէկ աղջիկ մէկ տղայ), որոնցմէ  
իրաքանջիւրը պիտի շահի \$50 Ամերիկեան Տոլար:

